ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ
ԵՊՀ պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր
albert.makaryan@ysu.am

ԱՍՏՂԻԿ ՍՈՂՈՅԱՆ
ԵՊՀ ասպիրանտ
Astghik.soghoyan@ysumail.am

ՀՐԱՇՔԻ ՄՈՏԻՎԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ («ԹԱՏՐՈՆ. ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»)

Բանալի բառեր և արտահայտություններ – աստվածաշնչյան պատում, «Ադամ Եվային խաբուիլը», ժանր ժանրի մեջ, կնոջ էութենականության խնդիր, արգելված պտուղ, «Քրիստոսի մէկ հրաշքը», «Տէր Զաքարին քարոզը»:

Ключевые слова и вырожения: библейское сказание, “Как Адам был обманут Евой”, жанр в жанре, вопрос о сущности женщины, запретный плод, “Одно чудо Христа”, “Проповедь отца Закария”.

Key words and expressions: biblical narration; “Eve Decieved Adam”; genre in genre; the issue of woman’s essence; forbidden fruit; “One Miracle of Christ”; “The Preach of Ter Zaqar ”.

Այսօր անհնար է խոսել հայ երգիծաբանության մասին՝ առանց հիշատակելու այն սնուցող երակի՝ Հակոբ Պարոնյանի անունը, որ, թվում է, ինքնին ծիծաղ է նշանակում ու ձուլված է երգիծանքին: «Մեր գրական անուններուն մէջեն միա՛կը որ խորհրդանշան մը դարձած է ժողովուրդին համար: *Պարոնեան* բառը ա՛լ գաղափար մըն է, ծիծաղի հոմանիշ է: Զարմանալի զուգադիպութեամբ մը, իր անունին ընկերացող երկու սկզբնատառերը[1] ծիծաղի վանկեր են արդէն»[2],- նկատում է Արշակ Չոպանյանը: Ինչպես փաստում է քննադատը, ժողովրդի շրջանում Պարոնյանի անունը զուգահեռվում է ծիծաղին, անքակտելիորեն (և

[1] Քննադատը նկատի ունի Հ. Պարոնյանի անվան և հայրանվան սկզբնատառերը, որ ընթերցանության ժամանակ ծիծաղի ձայնով են արտաբերում՝ **Հ**ակոբ **Հ**ովհաննեսի Պարոնյան (**Հ. Հ.** Պարոնյան):

[2] **Չօպանեան Ա.,** Դէմքեր, Փարիզ, 1929, էջ 31:

իրավացիորեն) կապվում երգիծանքի հետ, նույնանում նրան ու այդ փոխաբերական նշանակությամբ ավանդվում սերունդներին:

Երգիծանքը Հ. Պարոնյանի ստեղծագործական տարերքն է, էությունը, ծիծաղը՝ գեղարվեստական պատկերի ստեղծման միջոցը, որը պարոնյանական արձակում դառնում է ժամանակի ախտերը, պախարակելի բարքերը քարկոծելու և «ազգի երևելիներին» պսակազերծելու հնարանք: Հ. Պարոնյանի սրատես աչքը որսում ու արվեստի միջոցով պատկերում է սոցիալական, քաղաքական, բարոյական ու կենցաղային արատավոր երևույթները՝ իբրև ելակետ ունենալով նույն երգիծանքը:

Թերևս պարադոքսալ թվա, բայց մեծանուն երգիծաբանի այդ համբավը ոչ միայն դրական, այլև բացասական ազդեցություն է ունենում հեղինակի ստեղծագործության արժևորման վրա. երգիծաբան Պարոնյանը ստվերում է թողնում մանկագիր Պարոնյանին:

Եվ իրոք, տարածված է այն կարծիքը, թե «Հակոբ Պարոնեան ապրած է, ստեղծած է միայն ու միայն հեգնութեան մեջ ու հեգնութեան հետ»[3], և անգամ գրական շրջանակներում քիչ են այն մարդիկ, որ ծանոթ են Պարոնյանի ստեղծագործության մյուս կողմին՝ մանկագրությանը, որն իր բովանդակությամբ ու ձևով, իսկ, որ ամենակարևորն է, մանուկ հասցեատերով էականորեն տարբերվում է ծիծաղի շնչով գրված մնացյալ երկերից:

Պարոնյանի մանկական ստեղծագործությունները մեծ մասամբ զետեղված են «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականում, որ երգիծաբանը խմբագրել է 1876-ին:

Երկշաբաթաթերթում հրատարակված գեղարվեստական գործերն ունեն ժանրային հստակ բաժանում և կառույց. «Թատրոն. բարեկամ մանկանց»-ում Պարոնյանն ստեղծել է ժանրային ամբողջական համակարգ, որը հստակ օրինաչափություններով և կաղապարով կրկնվում է հրատարակվող յուրաքանչյուր համարում. 1. **ծավալուն գեղարվեստական, հետաքրքրաշարժ գործ** (պատմվածք, հեքիաթ, ակնարկ), որ դառնում է համարի առանցքը, **2. բարոյախրատական փոքրիկ զրույց** կամ **առակ**, **3. անեկդոտ**, **4. հանելուկ**[4]:

[3] **Օշական Հ.,** Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 4, Երուսաղեմ, 1956, էջ 73:

[4] Գեղարվեստական այս ստեղծագործություններին զուգահեռ՝ համարներում օրինաչափորեն տեղ են գտնում նաև ոչ գեղարվեստական գործերից խրատական դասերն ու կենդանիների մասին նկարագրությունները:

«Թատրոն. բարեկամ մանկանց»-ի այդ ժանրային համակարգում առանձնանում են նաև աստվածաշնչյան պատումները կամ Աստծո հանդեպ հավատ սերմանող պատմվածքներն ու հեքիաթները: Հետևելով ժամանակի սովորույթին՝ Պարոնյանն իր երկշաբաթաթերթում կարևոր տեղ է հատկացնում երեխաների քրիստոնեական դաստիարակությանը և հրատարակվող գործերում շեշտում հատկապես հավատի դերը:

Աստվածաշնչյան կնիքը կրող գործերը կամ Հին և Նոր Կտակարանների տարբեր հատվածների վերապատմումները կազմում էին ժամանակի մանկական գրականության ատաղձը: Ե՛վ «Թատրոն. բարեկամ մանկանց»-ին նախորդող պարբերականներում[5], և՛ դասագրքերում ընթերցանության հիմնական թեման Սուրբ գրքի պատմություններն էին, որոնք մանկան աշխարհայացքի, լավի ու վատի, ճշտի ու սխալի գիտակցության բանալին էին, կյանքը ճանաչելու և հասկանալու դիտանկյունը: Եթե բուն հայկական աղբյուրներն ուսուցանում էին հայ առաքելական եկեղեցու ավանդները, ապա օտարածին մի պարբերական՝ «Ավետաբեր տղայոց համար»-ը, հետաքրքրաշարժ պատմություններով փորձում էր շեղել մանուկների ուշադրությունը դեպի բողոքական եկեղեցին: «Գրական-գեղարվեստական հատուկենտ ստեղծագործությունների կողքին (օր.՝ «Հավիկը» հեքիաթը, որ ռուսական բանահյուսական հեքիաթի մշակում էր) հիմնականում տեղ էին գտնում աստվածաշնչյան թեմաները, որ միստիկ պատմություններով հոգեբանական վախ էին ներշնչում երեխաներին (օր.՝ «Չար ոգին») կամ բողոքականության գերակայությունն ու կարևորությունը նրբորեն ընդգծելով՝ գեղեցիկ հեքիաթներով փաստում սեփական եկեղեցու ճշմարիտ լինելը (օր.՝ «Փոքրիկ Մարիամը»)»[6]:

Ճիշտ է, տարբեր նպատակներով ու շարժառիթներով, բայց այդ ժամանակահատվածում երեխաների սեղանին դրված բոլոր աղբյուրներն էլ՝ իբրև երեխաների դաստիարակության և ժամանցի միջոց, տպագրում էին հատկապես աստվածաշնչյան պատմությունները: Այդ գործերը, սակայն, վերապատմումներից կամ դիպաշարի համառոտ ներկայացումից այն կողմ չէին անցնում, չէին դառնում գեղարվեստական ինքնուրույն միավորներ և չէին ստանում գեղարվեստական ստեղծագործության արժեք: Այս առումով

[5] Այդ պարբերականների ցանկը տե՛ս **Մակարյան Ալ.,** Կրկին Պարոնյանի հետ, Եր., 2018,էջ 261:

[6] **Մակարյան Ա.,** Հայկական վաղուց մոռացված մանկական մի պարբերականի «տարօրինակ» նկարագրդումները («Աւետաբեր տղայոց համար»), «Հայագիտական հանդես», N 3 (41), էջ 237:

բոլորից մի քայլ առաջ է կանգնում Պարոնյանը՝ գեղարվեստական նոր մակարդակի վրա բարձրացնելով այդ բնույթի երկերը:

Խորհրդային քննադատությունը, անդրադառնալով երգիծաբանի մանկական գրականության այդ խնդրին և աթեիզմի տեսանկյունից նայելով Սուրբ գրքի նկատմամբ գրողի վերաբերմունքին՝ փորձել է հնարավորինս հեռացնել նրան քրիստոնեությունից, կերտել Պարոնյանին հավատը մերժողի կերպարում: **Հ. Հակոբյանի** խոսքերով, օրինակ, «Մերժելով աստվածաշնչյան առասպելները, աստծո արարչագործության ու ամենակարողության գաղափարները, Պարոնյանը այդպիսով ընդհանրապես մերժում է ֆեոդալիզմի գաղափարական զենքը՝ կրոնը»[7]: Այս տեսանկյունից է մանկական պարբերականը քննում նաև պարոնյանագետ **Գ. Ստեփանյանը**. ««Թատրոն մանկանցի» առաջին բնորոշ գիծը նրա աշխարհիկ բնույթն է: Մինչդեռ ժամանակի գրքերը և մանկական հրատարակությունները բացարձակ մեծամասնությամբ տպագրում էին կրոնական երկեր, Հիսուսի կյանքի ու քարոզների հետ կապված միստիկական նյութեր ու զանազան դատարկաբանություններ»[8]: Գրականագետը երկշաբաթաթերթը քննում է ժամանակի համապատկերում և փորձելով առանձնացնել Հ. Պարոնյանին և, ինչու ոչ, նաև «հարմարացնելով» նրան խորհրդային գրաքննադատության քիմքին՝ հակադրում է գրողին վերջինիս ժամանակին՝ նրան վերագրելով զուտ աշխարհիկ գործեր, իսկ մյուս աղբյուրների ստեղծագործությունները պիտակավորելով որպես «կրոնական ու միստիկական դատարկաբանություններ»: Գրականագետի այդ քայլը, անշուշտ, արվել է Պարոնյանին իր ժամանակի համար «թույլատրելի հեղինակ» դարձնելու համար, բայց այսօր այդ պիտակավորումը ժամանակավրեպ է:

Հ. Պարոնյանը, հակառակ Գ. Ստեփանյանի արտահայտած կարծիքին, մեծ ու առանցքային տեղ է հատկացնում երեխաների քրիստոնեական դաստիարակությանը: Ասվածը փաստում են մի կողմից՝ աստվածաշնչյան պատումները, մյուս կողմից՝ ստեղծագործությունների գերակշիռ մասում հավատի ընդգծված նշանակությունը. փոքրիկ հերոսները փորձության ժամանակ աղոթում են ու փրկվում, իսկ Աստծո խոսքին դեմ գնացողները՝ պատժվում (դիպաշարային այդպիսի գծեր կան, օրինակ, «Աստուծոյ իմաստութեան վրայ գանգատուողը շուտով կը զղջայ», «Աստուծոյ արդարութիւնը», «Անվախ Ներսէս» և այլ գործերում):

[7] **Հակոբյան Հ.,** Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները, Եր., 1989, էջ 131:

[8] **Ստեփանյան Գ.**, Հակոբ Պարոնյան, Եր., 1956, էջ 48:

«Թատրոն. բարեկամ մանկանց»-ում տպագրված աստվածաշնչյան թեմայով գործերը, անշուշտ, տարբերվում են օրերի համանման ստեղծագործություններից: Այդ տարբերությունը, սակայն, ոչ թե վերաբերում է զուտ կրոնական խնդիրներին, այլ գեղարվեստական առանձնահատկություններին: Եթե մյուս պարբերականներում և գրքերում դրանք վերապատմումներ են, ապա Պարոնյանի գրչի տակ ստանում են գեղարվեստական ստեղծագործության արժեք: Գրողն աստվածաշնչյան պատումները հյուսում է հեքիաթի, պատմվածքի կամ միջժանրային հեքիաթ-պատմվածքի ժանրաձևերին՝ դրանք մանկանը ներկայացնելով նրան հասկանալի ձևով ու լեզվով: Փաստորեն ժամանակին տարածված այդ թեմատիկան երգիծաբանի ձեռքի տակ դառնում է հրաշապատում հեքիաթի նոր դրսևորում:

Քանիցս արդեն նշել ենք, որ Պարոնյանը գնում է երեխաներին չխաբելու և իրական, հնարավոր պատմություններով դաստիարակելու ճանապարհով: Այս դիտանկյունը պարբերականի առանցքային գիծն է, որն էլ պայմանավորում է ժանրային համակարգում իրապատում ստեղծագործությունների գերակա բնույթը: Դրանց կողքին, սակայն, կարևոր տեղ են զբաղեցնում հրաշքի մոտիվով գործերը: **Պարոնյանը հստակ սահմանագիծ է առանձնացնում հրաշքի և կախարդանքի միջև: Մերժելով կախարդանքը և դրան ժխտումով տեղ տալով միայն երկու երկերում («Կարմիր Վարդուկը»[9], «Կուկէսի մատանին»)՝ նա առանցքային տեղ է հատկացնում հրաշքի գործառույթին:**

Բանահյուսական հեքիաթի մասին իր ուսումնասիրության մեջ **Ն. Վարդանյանը** գրում է. «Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հրաշապատում հեքիաթի մերօրյա գրառումներում **հրաշքի առկայությունը մեծ մասամբ կապվում է Աստծո կամ Հիսուս Քրիստոսի անվան հետ:** Բանասացները հրաշքների իրագործվելը շատ դեպքերում բացատրում են ոչ թե կախարդական առարկաների տիրապետմամբ կամ գերբնական կենդանակերպ օգնականների աջակցությամբ, այլ աստվածային կամքով»[10]:

Նույն օրինաչափությունը նկատվում է նաև «Թատրոն. բարեկամ մանկանց»-ում: Հ. Պարոնյանը, մերժելով անիրական կախարդանքի

[9] Այս հեքիաթի մասին մանրամասն տե՛ս «Կարմիր Վարդուկը» հեքիաթին վերաբերող ուսումնասիրությունը մանրամասն տե՛ս **Մակարյան Ալ., Սողոյան Ա.,** Հանրահայտ մի հեքիաթի փոխադրության հետքերով. Շառլ Պերրո, Գրիմ եղբայրներ, Հակոբ Պարոնյան, «Վէմ», 2017, N 4 (60), նույնը՝ **Մակարյան Ալ.,** Կրկին Պարոնյանի հետ, Եր., 2018, էջ 287-309:

[10] **Վարդանյան Ն., Սեմիրջյան-Բեքմեզյան Ա., Վարդանյան Ն.,** Հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները, Եր., 2015, էջ 32:

ցանկացած դրսևորում, ընդունում և երեխաներին է հրամցնում աստվածային հրաշքի մոտիվը: Գերբնական երևույթներից պարբերականում տեղ են գտնում միայն Աստծո արարչագործության կամ Աստծո հանդեպ հավատի հետ կապվող գերիրական դրսևորումները: Հրաշքի մոտիվը պարբերականում նախ և առաջ արտահայտվում է աստվածաշնչյան պատումներում, որոնք հենվում են Հին և Նոր Կտակարանների տարբեր պատմությունների վրա: Պարոնյանը ներկայացնում է երեխաներին հայտնի դեպքերը՝ դրանք շարադրելով իրենց հասկանալի ձևով ու լեզվով, հարկ եղած դեպքում ավելացնելով նոր շերտեր կամ հանելով դիպաշարային որոշ գծեր: Արարչագործության ժամանակաշրջանին վերաբերող իրադարձությունները հեղինակը կապում է իր օրերին՝ այդպես ավելի առարկայական ու տեսանելի դարձնելով այն դասը, որ ընթերցողը պետք է քաղի գործից:

«Դավիթ և Գողիաթ», «Պաղտասար թագավորին խնջոյքը», «Յովսէփ Գեղեցիկ», «Անառակ որդի» գործերը համառոտաբար վերաշարադրված են, ներկայացված են միայն պատմության՝ մանկան համար հասկանալի և ուսանելի հատվածները: Վերջին ստեղծագործության մեջ, օրինակ, հեղինակը շեշտը դրել է որդու՝ տնից հեռանալու, մեղանչելու և որոշ ժամանակ հետո ապաշխարելու գործոնների վրա: Պարոնյանն այս գործում տեղ չի տալիս հոր և մեծ եղբոր երկխոսությանը, նախանձին, պատումում կարևորվում է հատկապես ներելու խնդիրը. «Ի՛նչ հիանալի տեսարան, անառակ որդին իր յանցանքը կը խոստավանի և մեղայ կըսէ սրտանց, գթասիրտ հայրը կընդունի անոր զղջումը և ուրախութիւն ընելու համար ամենէն պարարտ կովը մորթել կու տա…»[11]:

Այլ մոտեցում է ցուցաբերում հեղինակը «**Ադամ Եվային խաբուիլը**» և «**Քրիստոսի մէկ հրաշքը**» երկերի պարագայում:

Այս գործերից առաջինում աշխարհաստեղծման, առաջին կնոջ և տղամարդու պատմությունը Պարոնյանը ներհյուսում է դիպաշարային մեկ այլ գծին՝ ստեղծելով «հեքիաթ հեքիաթի» մեջ հնարքը: Ստեղծագործության դիպաշարային առաջին գիծը ներկայացնում է «Ծննդոց գրքի» դեպքերը՝ կնոջ և տղամարդու արարումը, արգելված ծառերի ստեղծումը, օձի կողմից Եվայի խաբվելն ու դրախտից վտարումը: Նկարագրական այս հատվածն աչքի է ընկնում հատկապես պատկերավոր խոսքով և իրադարձությունների կենդանի պատկերմամբ: Հեղինակը երկրային դրախտը երեխաների համար կերպավորում է առօրեական գույներով, որ «գեղեցիկ պարտեզի մը նկա-

[11] «**Թատրոն. բարեկամ մանկանց**», երկշաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1876, էջ 45: Այսուհետ նույն աղբյուրից բերվող մեջբերումները կնշվեն տեղում:

րագրութիւնը (թարիֆ) ընելով՝ ձեր բերնին ջուրերը Դրախտին ջուրերուն պէս վազցնէ. «Արծաթի պէս ջուրերն երեսի վրայ կերթան, ծառերը պտուղներէն կը հեծան, թռչուններն անուշ ձայնով կը ճըվըռտան, ծաղիկներն անուշ անուշ կը բուրեն, սարսափելի առիւծը հեզ գառնուկի հետ խոտ կուտէ, շունը կատուին հետ եղբօր պէս կը վարուի…»» (էջ 12):

Աստվածաշնչյան այս պատմությունը, սակայն, Պարոնյանը չի տեղադրում պարբերականում զուտ վերապատմումով, այլ ներհյուսում է այն մեկ այլ հեքիաթի՝ փորձելով բացատրել երեխաներին Եվայի՝ օձին խաբվելու պատճառը, թե որն էր հիմնական շարժառիթը, որ ամեն ինչի տեր կինը կորցրեց ունեցածը՝ արգելված պտուղն ստանալու ցանկությամբ, իսկ տղամարդը հետևեց նրան:

Դիպաշարի երկրորդ մասում գործողություններն արարչագործական ժամանակներից անցնում են ընթերցողին ավելի մոտ օրերի՝ հեքիաթային ժամանակի: Այս հատվածում արևելյան հեքիաթի օրինակով գործող անձինք են դառնում թագավորը և նրա հպատակ գյուղացիները, որոնց խոսակցությունը անտառում որսի ժամանակ լսելուց հետո վերջինս փորձության է ենթարկում նրանց: Առօրյա հոգսերից հոգնած ամուսինն ու կինը դժգոհում են իրենց կացությունից՝ մեղադրելով նախաստեղծ մարդկանց, որոնց «ծակաչք» լինելու պատճառով իրենք դրախտում անհոգ չեն ապրում: Կինն ասում է, որ Եվայի փոխարեն լինելու դեպքում չէր ուտի արգելված պտուղից, իսկ ամուսինը՝ շեշտում, որ Ադամի տեղում «աղուր ապտակ մը կիջեցներ» կողակցի երեսին: Լսելով այս գանգատները՝ արքան նրանց տեղափոխում է պալատ՝ տալով հպատակներ ու անհոգ կյանք: Շաբաթներ շարունակ բազում կերակուրներ իր հյուրերին հրամցնելուց հետո վերջինս որոշում է փորձել նրանց՝ սեղանին դնելով մի փակ տուփ և պատվիրելով չբացել այն: Արքայի հեռանալուց հետո կինը չի դիմանում արգելված պտղի գայթակղությանը և համոզում է ամուսնուն բացել, ինչից հետո թագավորը վտարում է նրանց պալատից:

Պարոնյանը բռնում է աստվածաշնչյան պատումի հիմնական թելը և պտտում այն երկրորդ անգամ՝ ստեղծելով նոր կերպարներ, նոր միջավայր ու ժամանակ, փոխակերպելով պտուղը տուփի, դրախտը՝ պալատի, բայց նույնը թողնելով դիպաշարի հիմնական գործառույթները, գործողությունը, հանգույցն ու լուծումը՝ **1. արգելք, 2. խախտում, 3. պատիժ:** Պարոնյանն ստեղծագործության հիմքում դնում է մարդկային էության անփոփոխ լինելու խնդիրը՝ հպանցիկորեն անդրադառնալով նաև կնոջ էութենականության հարցին, երբ վերջինս գայթակղվում է ցանկացած նոր և գաղտնի, անհասկանալի երևույթով՝ աչք փակելով ամեն ինչի վրա:

Մանկական հեքիաթում այս խնդիրը քննվում է ենթաշերտում, փակ տեքստով՝ առանց իգական սեռի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունք

արտահայտելու: Նույն հարցը, սակայն, մեծահասակներին ուղղված այլ գործերում քանիցս գրավել է հեղինակի ուշադրությունը, և Պարոնյանը բաց տեքստով ու ավելի պարզ խոսքերով անդրադարձել է կնոջ էության քննությանը և Ադամ-Եվա հարաբերությանը՝ կերպավորելով հարցը ոչ թե մանկան դիտանկյունից, այլ երգիծանքի պրիզմայով:

1874-ին «Թատրոն»-ի էջերում լույս տեսած «Ի՞նչ է կինը» խորագրով երգիծական հոդվածում քննելով կնոջ՝ աշխարհաստեղծ ժամանակից մինչ օրս չփոխված էությունը՝ գրում է.

«Ամեն բան փոխվեցավ: Կենդանիներն անգամ, որոնք իրմե առաջ ստեղծվեցան, ժամանակին հետ քիչ թե շատ իրենց բարքը փոխեցին…

Բայց կինը այս ճամբուն մեջ չէ բնավ: Նա մինչև օրը դեռ Եվա մ'է, որ խաբելու համար խնձոր մը կը նվիրե Ադամին»[12]:

Նույն թվականին դարձյալ «Թատրոն»-ի էջերում տպագրվող «Քաղվածքներ»-ից մեկում հեղինակը երգիծում է նաև արգելված պտուղը ուտելու պատճառները.

«Իրենց մայր Եվային ի վեր, կնիկներն եթե արգիլյալ պտուղ մը խածնեն ավելի հետաքրքրության համար է, քան թե որկրամոլության համար»[13]:

Այս հատվածը երկխոսության մեջ է մտնում մանկական հեքիաթի հետ, որտեղ մեղադրվում է կինը ոչ այնքան «ծակաչք», այլ չափից դուրս հետաքրքրասեր լինելու համար:

«Ադամ Եվային խաբուիլը» երկի կառույցի երկրորդ հեքիաթը, ի տարբերություն մեծահասակներին ուղղված բացահայտ դատողություններին, ենթատեքստով է անդրադառնում կնոջ էութենականության այդ հարցերին և դառնում է աստվածաշնչյան հայտնի պատմությունը բացելու և մանուկ ընթերցողներին ներկայացնելու բանալի: Աստվածաշնչյան պատումն ընդելուզելով արևելյան հեքիաթին՝ գրողը կապ է ստեղծում արարչագործական և ներկա ժամանակների միջև՝ խոսելով երեխաների հետ իրենց հասկանալի և ընդունելի ժանրով՝ հեքիաթով:

Աստվածաշնչյան անցյալ-ներկա նման կապ է ստեղծվում նաև **«Քրիստոսի մէկ հրաշքը»** գործում, որտեղ, սակայն, իբրև միացնող օղակ է ընտրվում անեկդոտի ժանրը: Քիչ ձկնով ու հացով շատ մարդիկ կերակրելու մասին պատմությունը հեղինակն ավարտում է իր օրերին վերաբերող երգիծական մի դրվագով: Հիսուս Քրիստոսի հրաշքի մասին խոսելուց հետո Պարոնյանը թեքում է պատումի ղեկը՝ այն տալով ժամանակակից մի

[12] **Պարոնյան Հ.,** Երկերի ժողովածու, հատ. 6, Եր., 1968, էջ 196:
[13] **Պարոնյան Հ.,** Երկերի ժողովածու, հատ. 7, Եր., 1969, էջ 350:

վարդապետի, որը, պատմելիս «հացին ու հոգիին համրանքն իրարու հետ շփոթելով, «Հինգ հազար հացով հինգ հոգի կշտացան» կը զրուցէ» (էջ 28):

Աստվածաշնչյան պատումներից բացի՝ հրաշքի գործոնն առկա է նաև «**Տէր Զաքարին քարոզը**» պատմվածքում: Այս ստեղծագործությունը Սուրբ Գրքում նկարագրվող պատմությունների անմիջական կամ փոխակերպված վերապատմում չէ, բայց նորից անդրադառնում է աստվածաշնչյան թեմատիկային: Այս անգամ գործողությունների կենտրոնում հայկական Կուկունտար գյուղի քահանա Զաքարն է, որ Դանտեի «Աստվածային կատակերգություն» գործի հերոսի նման ճանապարհորդում է դեպի դժոխք և դրախտ, երկնային դռների առաջ զրույցի բռնվում Պետրոս առաքյալի հետ, տարտարոսում տեսնում մեղավորների չարչարանքները, ինչից հետո վերադառնում է հայրենի գյուղ՝ պատմելու մեղավոր բնակիչներին աչքի տեսածը: Գերբնական իրադարձություններն այս պարագայում անմիջականորեն չեն կապվում աշխարհաստեղծման հետ, բայց նորից հարաբերվում են աստվածային հրաշքին:

Ալ. Մակարյան, Ա. Առոյան

Հրաշքի մոտիվը աստվածաշնչյան պատումների համապատկերում («Թատրոն. բարեկամ մանկանց»)

Ամփոփում

Հակոբ Պարոնյանը «Թատրոն. բարեկամ մանկանց» մանկական հանդեսում մերժում է երեխաներին խաբող կախարդանքը, փորձում նրանց հրամցնել հնարավոր ստեղծագործություններ: Այլ է, սակայն, պարոնյանական մոտեցումը աստվածաշնչյան պատմությունների նկատմամբ: Եթե կախարդանքի դեպքում վերջինս գնում է հրաշապատում հեքիաթի ժխտման ճանապարհով, ապա այս պարագայում նրա ընտրած ուղին հաստատումն է: Ավելին՝ հրաշապատում ստեղծագործության պարոնյանական այս ճյուղը «Թատրոն. բարեկամ մանկանց»-ում արտահայտվում է որպես իսկություն, հեղինակը միտում չունի հրաշքը քողազերծելու. այն ընթերցող մանուկներին մատուցվում է որպես եղելություն: Աստվածաշնչյան պատումները սոսկ չեն վերաշարադրվում, այլ երեխաներին են մատուցվում նոր լույսի ներքո ու նորովի մոտեցումներով՝ կա՛մ միահյուսվելով այլ ստեղծագործություններին, կա՛մ հանդես գալով նոր ժանրաձևի կաղապարում:

Ал. Макарян, А. Согоян

Мотив чуда в панораме библейских сказаний
(“Театр, друг детей”)

Резюме

В детском журнале “Театр, друг детей” Акоп Паронян отрицает колдовство, обманывающее детей, и пытается представить им возможные в действительности истории. Иным был, однако, пароняновский подход к библейским сказаниям. Если в случае с колдовством, он следует по пути отрицания жанра волшебной сказки, то во втором случае избранный им путь – это ее утверждение.

Более того, эта пароняновская ветвь волшебного произведения в журнале “Театр, друг детей” проявляется как реальная история, автор не преследует цели приоткрыть завесу над чудом: оно преподносится маленьким читателям как быль.

Библейские сказания не просто пересказываются, а преподносятся детям в новом свете и с новыми подходами – или в переплетании с другими произведениями, или в новых жанровидовых формах.

Al. Makaryan, A. Soghoyan

The Theme of Miracle in the Context of Biblical Narrations
(“Theatre: Friend to Children”)

Summary

In his periodical “Theatre: Friend to Children” Hakob Paronyan denies the magic that deceives the children and tries to present probable works. But Paronyan’s attitude towards biblical stories is quite different. If in case of magic he chooses the way of rejection in miracle fairy tales then in this case his method is affirmation. Moreover this branch of “Theatre: Friend to Children”, i.e., miracle works by Paronyan reflects reality: the author has no intention to unveil the miracle: it is presented to the reading children as reality. The biblical narrations are not merely reproduced but are presented to children under new light, with new attitudes by being either intertwined with other works or produced in the new genre sampler.

Խմբագրություն է ուղարկվել 05. 09. 19
Հանձնարարվել է գրախոսության 14. 09. 19
Տպագրության է հանձնարարվել 15. 10. 19